Yerevan, Republic of Armenia
2 Arshakuniats, 15 floor
tel. 568 968, 586 529 fax 528 752
news@aravot.am
www.aravot.am

Առավոտ
a r a v o t d a i l y
օ ր ա թ ե ր թ
հրատարակվում է 1994 թ.
գինը՝ 150 դրամ
61/4157/ 4 ապրիլի 2012 չորեքշաբթի
ISSN 1829-2224
12049
9 771829 222003

Ա

# Համախմբման պատրանքը

«Մեր քաղաքական թիմը երկար եւ բուռն քննարկումներից հետո գումարեց համագումար եւ վարչության նիստ ու ձայների մեծամասնությամբ որոշեց մասնակցել խորհրդարանական ընտրություններին այսինչ ցուցակով, որովհետեւ մեր կուսակցությունները ունեն ծրագրային ընդհանրություններ եւ գաղափարապես մոտիկ են»: Մոտավորապես այդպես են ՀՀԿ-ի եւ ԲՀԿ-ի ցուցակներում իրենց հայտնվելը բացատրում «Ազգային միաբանության», ՔԴՄ-ի, ՍԻՄ-ի, ՄԱԿ-ի, Ուրիխանյանի առաջադիմականների առաջնորդները: Իրականում ոչ մի լարված ու դրամատիկ քննարկումներ չեն եղել, որովհետեւ, ըստ էության, չկան քաղաքական թիմեր եւ ծրագրային դրույթներ. կան անհատներ՝ համակրելի եւ ոչ այնքան, այդ անհատներն ունեն հավակնություններ՝ առողջ կամ անառողջ, նրանց կողքին թերեւս կարող է լինել նաեւ համախոհների խմբակ, իսկ գլխավոր «ծրագրային դրույթը» պատգամավոր դառնալն է՝ մեծ կուսակցության «պոչից բռնած»: Դա միանգամայն բնականոն ձգտում է, եւ թվարկած «կուսակցությունների» լիդերները, հավանաբար, նորմալ պատգամավորներ կդառնան: Պարզապես պետք չէ առասպելներ պատմել թիմի «տանջալից որոշումների» եւ «գաղափարական ընդհանրությունների» մասին, պարզ չէ՞, որ այդ որոշումներն ընդունվում են միանձնյա՝ հենց պատգամավորական հավակնություններ ունեցողների կողմից: Ի դեպ, ՕԵԿ-ը, որին շատ են սիրում «քլնգել» ընդդիմադիրները եւ երբեմն նաեւ իշխանամետները, ապացուցեց, որ, այնուամենայնիվ, առանձին քաղաքական թիմ է եւ ՀՀԿ-ի մեջ չձուլված է գնում ընտրությունների:

ՀԱԿ-ում վիճակը մոտավորապես նույնն է՝ այնտեղ չկան 17 կուսակցություններ, կա, որոշ վերապահումներով, երեք կուսակցություն՝ ՀՀՇ-ն, «Հանրապետությունը» եւ ՀԺԿ-ն, ինչպես նաեւ անհատներ, որոնք ներկայացնում են Լիբերալ կուսակցությունը, ԺՈՒԿ-ը, «Ժողովրդավարական Հայաստան»-ը, «Ազատություն» կուսակցություն, ՍԴՀԿ-ն եւ այլն: Նրանք բոլորը հարգանքի արժանի մարդիկ են, եւ շատ ճիշտ կլինի, որ հայտնվեն խորհրդարանում, սակայն ինչի՞ համար է պետք քաղաքական դաշտի համախմբման այդ իմիտացիան: Միեւնույն է՝ ոչ ոք չի հավատում, որ նշված «կուսակցություններում» իրար հետ գումարած մի քանի հարյուր մարդուց ավելի կա: Ի վերջո, տրամաբանական կլիներ, որ ՀԱԿ-ն էլ իրեն հռչակեր կուսակցություն, եւ դրա նախադրյալը հենց այն է, որ այդ քաղաքական ուժը հանդես է գալիս բոլոր ոլորտներին վերաբերող ծրագրերով (ի դեպ, շատ հետաքրքիր եւ գրագետ կազմված), որոնք ակնհայտորեն գրվել են ոչ թե «17 կուսակցություններում», այլ ՀԱԿ-ի կենտրոնական գրասենյակում:

Եթե այդ երեք՝ ՀՀԿ, ԲՀԿ, ՀԱԿ ցուցակներում ընդգրկվածները հրաժարվեն կուսակցապետ լինելու իրենց ամբիցիաներից եւ ներկայանան որպես ՀՀԿ-ականներ, ԲՀԿ-ականներ եւ ՀԱԿ-ականներ, քաղաքական դաշտը ավելի «կպարզաջրվի» եւ կօպտիմալացվի: Բայց հայերից սպասել, որ նրանք կհրաժարվեն նույնիսկ ֆիկտիվ կառույցի առաջին դեմք հռչակվելուց, բավականին դժվար է:

ԱՐԱՄ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

# Պատրա՞ստ է Արամ Մանուկյանը «ասպետական» քայլի



«Ժառանգության» համամասնական ցուցակում ընդգրկված Կարապետ Ռուբինյանը եւ «Ժառանգության» փոխնախագահ Ռուբեն Հակոբյանը նախօրեին կոչ արեցին ՀՀՇ նախագահ Արամ Մանուկյանին՝ այսպես ասած, «ասպետական ժեստ» անել եւ Արաբկիրի թիվ 4 ընտրատարածքում հրաժարվել ընտրապայքարից՝ թողնելով ընդդիմության թեկնածու Զարուհի Փոստանջյանին: Այս առնչությամբ Արամ Մանուկյանը լրատվամիջոցներին չի ցանկացել որեւէ մեկնաբանություն տալ՝ ասելով. «No comment»:

Երեկ Aravot.am-ը Զարուհի Փոստանջյանից հետաքրքրվեց՝ ի՞նչ եք կարծում, Արամ Մանուկյանը կանի՞ նման «ասպետական» քայլ, թե՞ ոչ, Զարուհի Փոստանջյանը նույնպես «no comment» պատասխանեց՝ ասելով. «Դա Արամ Մանուկյանի գործն է, ես իր տեղը չեմ կարող պատասխանել՝ ընդունա՞կ է այդ քայլին, թե՞ չէ: Ես չեմ ուզում ընտրապայքարի վերաբերյալ էլ որեւէ մեկնաբանություն տալ ու ասել, թե իմ շանսերը որքան են, Արամ Մանուկյանինը՝ որքան: Կտեսնենք»: Հիշեցնենք, որ Րաֆֆի Հովհաննիսյանը թիվ 7 ընտրատարածքում իր թեկնածությունը հանեց՝ բարի կամք դրսեւորելով Նիկոլ Փաշինյանի նկատմամբ: Եվ հիմա, ինչպես ասաց Ռուբեն Հակոբյանը, հերթը ՀԱԿ-ինն է:

Հ. ԶԵԲԵԶՅԱՆ

## ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

### ԵԿՄ-ում արդեն հեռացածներին «հեռացնում» են

Երեկ «Առավոտի» հետ զրույցում ԵԿՄ վարչության նախագահ, ՀՀԿ համամասնական ցուցակով ԱԺ պատգամավոր դառնալու հավակնություն ունեցող գեներալ Մանվել Գրիգորյանի օգնական Վարդան Վարդանյանը հայտարարեց, թե ԵԿՄ Կենտրոնի տարածքային բաժանմունքից արդեն 24-26 հոգի հեռացվել են՝ «իրենց դիմումի համաձայն»: Թե ի՞նչ ձեւակերպմամբ են հին անդամները հեռացվում՝ Վարդանյանը դժվարացավ ասել, բայց հավելեց, թե՝ «իրենք դիմել են դուրս գալու համար՝ այդ դիմումը հարգվել է»: Հիշեցնենք, որ ԵԿՄ Կենտրոնի տարածքային կառույցի անդամները, որոնց հիմա, իբր, հեռացնում են միությունից, դեռ մի քանի ամիս առաջ իրենք էին հայտարարել ԵԿՄ-ից դուրս գալու մասին:

Կարդացեք էջ 3:

### Ինքնաբացարկները «տեղի խնդիր» չե՞ն

«Մենք գործադիրում ենք աշխատում, կարիք չկա, որ ցուցակում լինենք»,- Aravot.am-ին ինքնաբացարկ գրելու իր դիմումը այսպես մեկնաբանեց Վայոց Ձորի մարզպետ Սերգեյ Բագրատյանը: Նա ԲՀԿ համամասնական ցուցակի 62-րդ համարն էր: Դիտարկմանը՝ ցուցակում ընդգրկվելիս չգիտեի՞ք, որ գործադիրում եք աշխատում, մեր զրուցակիցն արձագանքեց. «Մեր կուսակցության քաղխորհուրդը որոշեց այդպես: Հիմա էլ՝ նորմալ է: Մենք համարում ենք, որ մենք գործադիրում անելիք ունենք, երկու մարզպետով որոշել ենք մեր աշխատանքով զբաղվել»: ԲՀԿ ցուցակից ինքնաբացարկի դիմում ներկայացրած մյուս մարզպետը Գեղարքունիքի մարզպետ Նվեր Պողոսյանն է, որը ցուցակի 60-րդ հորիզոնականում էր: Սերգեյ Բագրատյանը հավաստիացրեց, որ ինքնաբացարկների պատճառը «տեղի խնդիրը չէ»:

Այսուհետեւ թերթի 8-րդ էջում կարող եք կարդալ օրվա հումորը:

## ԲԱՐԻ ԼՈՒՅՍ

### Ասուլիս

Այսօր, ժամը 13-ին, «Տեսակետ» մամուլի ակումբի հյուրն է ՀԿԿ առաջնորդ Ռուբեն Թովմասյանը:

### Եղանակ

Երեւան +3 +15, Շիրակ -7 +6, Կոտայք -7 +6, Գեղարքունիք -7 +6, Լոռի -5 +13, Տավուշ -3 +14, Արագածոտն լեռներ -7 +6, Արագածոտն նախալեռն. 0 +15, Արարատ 0 +16, Արմավիր 0 +16, Վայոց Ձոր լեռներ -7 +6, Վայոց Ձոր նախալեռն. -5 +11, Սյունիքի հովիտներ +1 +17, Սյունիքի նախալեռներ -4 +11

## ԲՀԿ-ի խոսքը հակասում է գործերին



«Ժառանգություն» խմբակցության պատգամավոր Անահիտ Բախշյանը կասկածի տակ է առնում «Բարգավաճ Հայաստան» կուսակցության նախընտրական ծախսերի համապատասխանելիությունը թույլատրելի չափերին: Նա Aravot.am-ի հետ զրույցում, անդրադառնալով երեկ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի (ԿԸՀ) կողմից հաստատված կուսակցությունների արտաքին գովազդների քանակին, որով ԲՀԿ-ն առաջատար դիրքերում է՝ 164 վահանակ օգտագործելու մասով, դժգոհեց, որ մյուս կուսակցությունների համար անհավասար ընտրապայքար են ստեղծում. «Կարծում եմ՝ պետք է աչալուրջ հետեւեն իրենց ֆինանսներին, որ դուրս չգան սահմանված չափից: Ուրիշ բան՝ իրենց նախահաշիվներում ինչ ցույց կտան, հատկապես «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունը իր ծախսերով կգերազանցի բոլոր թույլատրելի ֆինանսավորման սահմանները: Լուծումը կլինի այն, երբ պատկան մարմինները հաշվեն՝ ԲՀԿ-ն ինչքան գումար է ծախսել, թույլատրելի գումարի մեջ տեղավորվո՞ւմ է, թե՞ ոչ»: Տիկին Բախշյանի կարծիքով՝ ընդդիմադիր ուժերի ծախսերը կուսումնասիրվեն, բայց ԲՀԿ-ի նկատմամբ նույնը չի արվի. «Որը կոալիցիայի մեջ գտնվելով՝ այս օրերին փորձում է տիրանալ ընդդիմադիր հատվածի ձայներին անազնիվ ձեւերով»: Վերջում էլ՝ «ԲՀԿ-ի խոսքը գործին հակասում է» մտքով եզրափակեց տիկին Բախշյանը:

ՍԻՎԻԼԻԹԱՍ ՀԻՄՆԱԴՐԱՄ THE CIVILITAS FOUNDATION

«Սիվիլիթաս» հիմնադրամը հրավիրում է

«Ընտրարշավի օրակարգը մաս 2»

թեմայով քննարկմանը:

Բանախոսներն են՝

«Թրանսփարենսի Ինթերնեշնլ» հակակոռուպցիոն կենտրոնի նախագահ

Սոնա Այվազյանը

հրապարակագիր

Արմեն Օհանյանը

Պետական ագրարային համալսարանի դոկտոր, պրոֆեսոր

Սամվել Ավետիսյանը

Քննարկումը կվարի «Սիվիլիթաս» հիմնադրամի տնօրեն

Սալբի Ղազարյանը

Քննարկումը տեղի կունենա

ապրիլի 5-ին, ժամը 16:00-ին

«Երեւան» հյուրանոցի «Ռոսինի» սրահում:

Մասնակցությունը միայն նախնական գրանցումով՝ 010 500 119:

# «Դա ներքին վեճ է»

## Արդարադատության փոխնախարարը՝ ինչակյանների արդեն չորս տարի շարունակվող վեճի մասին



«Մենք հիմա ունենք մի վիճակ, որ երկու թեւ՝ կուսակցության ներսում կամ կուսակցության անունն օգտագործելով, իրար հետ վիճում են: Այս վեճը, սակայն, դուրս է արդարադատության նախարարության գործառույթներից: Սա իրենց ներքին վեճն է, եւ դա իրենք իրար մեջ պետք է լուծեն»,- երեկ «Առավոտի» հետ զրույցում անդրադառնալով «ինչակյաններն ընդդեմ ինչակյանների» գործին՝ կարծիք հայտնեց ՀՀ արդարադատության փոխնախարար Արամ Օրբելյանը՝ հավելելով, որ բոլոր ընտրություններից առաջ նմանատիպ խնդիրներ տարբեր կուսակցություններում ծագում են: Պատասխանելով լյուդմիլասարգսյանական կողմի հնչեցրած մեղադրանքներին, որ գրանցելով պերկուպերկյանականներին՝ նախարարությունը՝ պետական մարմինը, քաղաքական իշխանության պատվերն է կատարում, մեր զրուցակիցը պարզաբանում է, որ արդարադատության նախարարությունն այս ոլորտում իրականացնում է գրանցում. «Եթե վաղը իրենք համագումար անեն, եւ որոշվի, որ ոչ Լյուդմիլա Սարգսյանը, ոչ Գեւորգ Պերկուպերկյանը չեն կարող լինել ատենապետ, այլ մի երրորդ անձ պետք է լինի, կբերեն փաստաթղթերը, դրանք ճիշտ կլինեն՝ մենք նորից կգրանցենք»: Փոխնախարարը պարզաբանում է, որ 2001 թվականից, բարեփոխումների արդյունքում, իրավաբանական անձանց գրանցման գործընթացը ՀՀ-ում իրականացվում է մի ձեւաչափով, որ փաստաթղթերում տրված տեղեկությունների ճշտությունը, որպես այդպիսին, ռեգիստրը չի իրականացնում, քանի որ դա բերում է բյուրոկրատական քաշքշուկի. «Ցանկացած անձ, որ դիմում է ռեգիստր եւ ներկայացնում որոշակի փաստեր, դրանց համար պատասխանատվություն է կրում ինքը: Գրանցող մարմինը ստուգում է միայն փաստաթղթերի ամբողջականությունը եւ ճիշտ կազմված լինելու փաստը»: Տվյալ դեպքում Գեւորգ Պերկուպերկյանի ներկայացրած փաստաթղթերը համապատասխանել են օրենքի պահանջներին, եւ պետռեգիստրը գրանցել է նրան՝ որպես ՍԴՀԿ ատենապետ: Այնուհետեւ բերվել է բողոք Լյուդմիլա Սարգսյանի կողմից, որի հիման վրա քննվել են այդ ակտի իրավական հիմքերը. մի շարք անձանց հետ լսումներ են կազմակերպվել, բացատրություններ են վերցվել, պայմանական ասած, նոր եւ հին ատենապետերից, վարչությունների անդամներից, այդ համագումարը ֆիքսել է նաեւ նոտարը եւ այլն, եւ նախարարությունում եկել են այն եզրահանգման, որ՝ «2011 թվականին պերկուպերկյանականների կողմից անցկացված 8-րդ համագումարի անցկացման կարգի խախտում չի եղել», ու գրանցել են: Հիշեցնենք, որ մինչ այդ նախարարությունը մերժել էր Պերկուպերկյանին գրանցել որպես ՍԴՀԿ ատենապետ՝ 2009 թվականին եղած 7-րդ համագումարի հիմքերը ոչ հիմնավոր համարելով:

Ինչ վերաբերում է «Արդարադատության նախարարությունում փաստաթղթերը չե՞ն գրանցվում» (Առավոտ. 30.03.12) հրապարակմանը, որտեղ ներկայացվում են գործի մանրամասները եւ տարակուսանք է արտահայտվում այն առիթով, որ «ինչակյանների գործով»՝ օրինականության վերահսկողության վարչական գործում փաստաթղթերը համարակալված, գրանցված չեն, դրանցից շատերից անհասկանալի է՝ թե ում եւ ինչ նպատակով են տրված եւ այլն, նման մի փաստաթուղթ էլ հրապարակված է թերթում, փոխնախարարը այսպես արձագանքեց. «Այո, սա չունի գրված ինչ-որ բաներ, բայց սրանց զուգահեռ ունենք բացատրություններ, որոնք տրվել են եւ գործերում կան... եթե մենք փորձենք լինել բյուրոկրատ, տառակեր՝ պետք է իրենց ասենք՝ էս տեքստը ավելացրեք, սա արեք, նոր բերեք: Մեզ համար կարեւորը պարունակությունն է, եւ սա տրվել է համապատասխան փաստաթղթի հետ, եւ եթե գործին փորձենք ծանոթանալ՝ կտեսնենք, որ դա 94-րդ էջում 25-րդ փաստաթուղթն է՝ ընտրված պատվիրակների ցուցակը: Երբեմն նամակները, որոնց կից գալիս են նաեւ փաստաթղթերը, գործին կարող է եւ չկցվեն, զուտ այն պատճառով, որ երկու անգամ հաստափոր չլինի գործը»:

Մինչ այս իրադարձությունները տեղի էին զարգանում, Գեւորգ Պերկուպերկյանը նախորդ օրը դիմում էր ներկայացրել ԿԸՀ-ին՝ պահանջելով մերժել նրա՝ պատգամավորության թեկնածու գրանցելը: «Առավոտի» հետ զրույցում Գեւորգ Պերկուպերկյանն ասաց, որ բոլոր հարցերի վերաբերյալ իրենք պարզաբանումներով հանդես կգան առաջիկայում. «Մենք կպատասխանենք ոչ միայն ներկա գործընթացներին, այլ նաեւ կխոսեմ այն մասին, թե ովքեր չէին կարողանում արձանագրություն գրել եւ Նազարի բախտով հայտնվում են աթոռների վրա: Լյուդմիլա Սարգսյանը ՍԴՀԿ-ի համար խնդիր չէ, մենք իրեն հեռացրել ենք, ՀԱԿ-ը թող մտածի»:

ՆԵԼԼԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ

# Ադրբեջանի նախագահը վիրավորանքներ է հնչեցրել Հայաստանի հասցեին



Բաքվում մեկնարկած «Եվրանեսթ» խորհրդարանական վեհաժողովի երկրորդ լիագումար նիստին երեկ ուղերձով հանդես է եկել Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւը: Հայաստանյան պատվիրակության անդամ Նաիրա Զոհրաբյանն Aravot.am-ի հետ զրույցում վերջինիս ելույթը որակեց «կոռեկտության, չափի եւ էթիկայի բոլոր սահմաններն անցած ելույթ»: Ըստ տիկին Զոհրաբյանի՝ իր ելույթի մի զգալի մասը Ադրբեջանի նախագահը «նվիրել» է Ղարաբաղյան հիմնախնդրին: «Բացի իրենց մշտական քարոզչական «լոլոներից»՝ 20 տոկոս գրավյալ տարածքներ, մեկ միլիոն փախստական, Ալիեւն ուղղակիորեն վիրավորական արտահայտություններ հնչեցրեց Հայաստանի հասցեին՝ Հայաստանին մեղադրելով քսենոֆոբիայի, ադրբեջանցիների գերեզմանները պղծելու մեջ եւ բավականին այլ ոչ կոռեկտ ձեւակերպումներ թույլ տվեց իրեն»,- ասաց տիկին Զոհրաբյանը:

Հայկական կողմը, բնականաբար, անարձագանք չի թողել հնչեցված գնահատականները: Քանի որ նիստի առաջին հատվածը պաշտոնական է եղել, եւ մեր ներկայացուցիչները, ըստ էության, պատասխանելու հնարավորություն չեն ունեցել, հետեւաբար այժմ ընթացող նիստում հայկական կողմը «Եվրանեսթի» պատվիրակներին, ղեկավար մարմնին բաժանել է բաց նամակ, որին կցված է նախկինում մեր պատվիրակների կողմից «Եվրանեսթի» ղեկավարությանն ուղղված այն փաստաթուղթը, որում անհամաձայնություն է հայտնվում Խորհրդարանական վեհաժողովը՝ նման կարեւորագույն ֆորումը, Բաքվում անցկացնելու մասին որոշման հետ, եւ բերվում են հիմնավորումներ: Նամակում, նաեւ արդեն Ալիեւի ելույթից ելնելով, փաստվում են նախկին մտահոգությունները: Հայկական պատվիրակները նաեւ կոչ են անում «Եվրանեսթի» ղեկավարությանը այսուհետեւ վեհաժողովի եւ լիագումար նիստերի եւ հանձնաժողովների գործունեության վայրն ընտրելիս ավելի մտածված որոշումներ կայացնել՝ նման իրավիճակներից խուսափելու համար, նաեւ կոչ է արվում ելույթի հնարավորություն չտալ այն անձանց ու գործիչներին՝ անկախ զբաղեցրած դիրքից, որոնք օգտագործում են նման ամբիոնները քսենոֆոբիայի եւ մարդատյացության կոչեր անելու համար: Հայաստանի պատվիրակության անդամները նաեւ իրենց բանավոր ելույթների ընթացքում կանդրադառնան Ադրբեջանի նախագահի ելույթին:

Տիկին Զոհրաբյանը տեղեկացրեց, որ ելույթը շատ վատ տպավորություն է թողել նաեւ Եվրախորհրդարանի պատգամավորների վրա. նրանք մեր պատվիրակներին մոտեցել եւ ասել են, որ իրենց համար նման ելույթը, նման հռետորաբանությունը, որակումները անընդունելի են:

Ն. Գ.

Առավոտ
aravot daily
ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 4.04.2012

# ԵԿՄ-ն ազատվում է ըմբոստներից

## Իսկ ըմբոստները տարակուսում են՝ կամավորականն էսքան ստրուկ կլինի՞

Դեռ անցյալ տարվա նոյեմբերին եւ փետրվարին՝ ԵԿՄ համագումարից հետո, «Առավոտը» տեղեկացրել էր, թե ավելի քան 50 երկրապահներ ԵԿՄ-ից դուրս գալու որոշում են կայացրել եւ համապատասխան դիմումով դիմել են Միության վարչության նախագահին: Պատճառը, ինչպես այն ժամանակ մատնանշել էին մեր աղբյուրները, այն էր, որ ԵԿՄ վարչության նախագահ Մանվել Գրիգորյանի նոյեմբերի 10-ի որոշմամբ՝ Կենտրոն տարածքային բաժանմունքի ղեկավարի պաշտոնից, առանց այդ կառույցի անդամների կարծիքն իմանալու, հեռացվել էր ընդամենը 4 ամիս այդ պաշտոնում ընտրված Էդիկ Գյումրյանը եւ ժամանակավոր պաշտոնակատար էր նշանակվել Ռոբերտ Նազարեթյան անուն-ազգանվամբ մեկը: Այն ժամանակ ԵԿՄ-ում հերքեցին ազատամարտիկների՝ միությունից հեռանալու մասին մեր տեղեկությունը՝ միաժամանակ հաստատելով, որ Կենտրոնի տարածքային կառույցում ղեկավար կազմի փոփոխություն է կատարվել՝ «պայմանավորված այդ կոնկրետ կառույցում կազմակերպչական խնդիրներով»: Փաստն այն է, սակայն, որ ԵԿՄ-ի հերքումները իրականում ընդամենը մեզ մոլորեցնելու նպատակ ունեին՝ առավել եւս, որ մեր տեղեկությունները հիմնված էին այնպիսի աղբյուրների վրա, որոնք այդ պահին ինչ-ինչ պատճառներով հրաժարվում էին իրենց անունը հրապարակել, ուստի՝ մեզ մնում էր միայն հավատալ ԵԿՄ պաշտոնական հայտարարություններին: Երեկ արդեն հրապարակվել է այդ կառույցի վարչության նախագահ գեներալ Մանվել Գրիգորյանին ուղղված մի նամակ, որը ստորագրել եւ իրենց ԵԿՄ անդամակցությունը կասեցնելու մասին են հայտարարել 70 ազատամարտիկներ, որոնցից 5-10-ը, մեր տեղեկություններով, արդեն հասցրել են ինչ-ինչ ճնշումների տակ իրենց ստորագրությունը ետ վերցնել: Մինչդեռ անցած շաբաթ օրը՝ մարտի 31-ին, «Առավոտին» հայտնի դարձավ, որ ԵԿՄ Կենտրոնի տարածքային կառույցում, այնուամենայնիվ, լուրջ զարգացումներ են տեղի ունեցել, որոնք շարունակվում են նաեւ այսօր: Այսպես, մեր ձեռքի տակ է ԵԿՄ վարչության նախագահ Մանվել Գրիգորյանի «հրամանն» առ այն, որ «ԵԿՄ կանոնադրության բազմակի խախտման, ինչպես նաեւ իր պարտականությունների թերացման, կազմակերպության վարչության հրահանգների չկատարման պատճառով 2011թ. նոյեմբերի 10-ից դադարեցվել է Էդվարդ Գյումրյանի՝ որպես ԵԿՄ Կենտրոնի տարածքային բաժանմունքի նախագահի, աշխատանքային պարտավորությունները»: Նույն պահից էլ տարածքային բաժանմունքի նախագահի պարտականությունները դրվել էին ԵԿՄ Երեւանի քաղաքային բաժանմունքի փոխնախագահի, գեներալ Մանվելի մտերիմներից մեկը համարվող «Ճուտ» մականվամբ Արթուր Մկրտչյանի վրա: Ըստ գեներալի հրամանի՝ երկամսյա ժամկետում Կենտրոնի տարածքային բաժանմունքի անդամները պիտի ընդհանուր ժողով գումարեին եւ նախագահ ընտրեին: «Սույն հրամանի կատարման վերահսկողությունը վերապահում եմ ինձ»,- իր հրամանն այսպես էր եզրափակել գեներալ Մանվելը:



ԵԿՄ Կենտրոնի տարածքային կառույցի անդամները, որոնք արդեն մի քանի ամիս է՝ իրենց անհամաձայնությունն են հայտնում ԵԿՄ վարչության նախագահի որոշման հետ, եւ որոնք նաեւ ստորագրել են Մանվել Գրիգորյանին ուղղված հայտարարությունը, մեզ հետ հանդիպման ժամանակ հայտարարեցին, թե առաջին իսկ օրվանից իրենց համար անհասկանալի եւ անընդունելի է եղել նման որոշումը, նախ՝ այն պատճառով, որ ԵԿՄ-ն հասարակական կազմակերպություն է եւ ոչ թե զորանոց կամ ռազմական կառույց, ուստի այստեղ հրամաններով չէ, որ պետք է առաջնորդվել, այլ որոշումներով: «Երկրորդ՝ մեզ համար անհասկանալի էր՝ ինչո՞ւ եւ ի՞նչ պատճառաբանությամբ են հեռացրել մեր կառույցի նախագահին՝ առանց մեր կարծիքը հարցնելու: Բաժանմունք եկած Մանվել Գրիգորյանի շուրջ 30 «պատվիրակներից» մեկը՝ «Ճուտը», մեկի բերանը փորձեց փակել, ասելով, թե՝ դու սուս մնա, մյուսին էլ՝ դուք իրավունք չունեք քննարկելու գեներալի հրամանը, եւ այլն: Մենք հասարակական կազմակերպություն ենք, ի՞նչ հրամանի մասին էր խոսքը: Բայց մեզ լսող չկար, բաժանմունքի կնիքը, մեր մարտական ուղու քարտերը վերցրին ու գնացին»,- պատմեց հայտարարությունը ստորագրածներից մեկը: Բաժանմունքի անդամները գլուխ գլխի էին եկել ու որոշում կայացրել՝ կասեցնել իրենց անդամությունը ԵԿՄ-ին, բայց հետո որոշել էին դիմել դատարան ու վիճարկել գեներալ Մանվելի «հրամանը»՝ հաստատ որոշում ունենալով, որ դրանից հետո իրենք միեւնույն է՝ ԵԿՄ-ից դուրս են գալու: Նման քաղհայցով նրանք արդեն դիմել են դատարան՝ պահանջելով գեներալ Մանվելի որոշումն առ ոչինչ հայտարարել՝ բեկանել կամ հիմնավորել դրա օրինականությունը: Այս գործով դատական մի նիստ եղել է, հաջորդ նիստը նշանակված է ապրիլի 16-ին:

Մինչ այդ, սակայն, ԵԿՄ վերնախավը՝ հասկանալով, որ այս երկրապահների հետ դժվար է լինելու, արդեն համագումարից հետո, չսպասելով դատի ավարտին, սկսել է հատ-հատ հրավիրել Կենտրոնի տարածքային բաժանմունք եւ հեռացնել ԵԿՄ-ից՝ տպավորություն ստեղծելու համար, որ ոչ թե վերջիններս են լքել Երկրապահը, այլ հեռացվել են: Ապրիլի 1-ին Կենտրոնի բաժանմունքի 7 երկրապահներ էին հրավիրվել ժողովի, որի օրակարգում դրված էր «ԵԿՄ-ից անդամների հեռացման հարցը»: «Մենք քաղաքականությանը չենք միջամտում, մենք դրա հետ գործ չունենք: Ենթադրում եմ, որ կառույցի ղեկավարին փոխելն ու նոր անդամներով համալրելու իրական պատճառն այն է, որ մենք երբեք կամակատար չէինք լինի, եւ եթե մեզ հրամայվեր որեւէ կուսակցության կամ քաղաքական գործչի կողքին կանգնել կամ ընտրությունների ժամանակ ինչ-որ մեկին ընտրել՝ մենք դա չէինք անի: Հիմա փորձում են ազատվել մեզնից կամ մեր ձայնը բաժանմունքում՝ որպես փոքրամասնության, խեղդել»,- իրար հերթ չտալով՝ ասում էին մեր զրուցակիցները: «Մենք սպասում էինք, որ դատը լինի, տեսնենք՝ ինչ արդյունք ա լինելու, որից հետո, այսպես թե այնպես, ինքներս էինք հեռանալու, իսկ հիմա նրանք ուզում են առաջ ընկնել: Էս ի՞նչ ֆինանսական բան են մեզ կպցնում: Փրփուրներից են կախվում»,- նկատեց բաժանմունքի անդամներից մեկը՝ ի պատասխան մեր հարցին հավելելով, թե հատ-հատ են կանչում հեռացնելու, որ շատ աչքի չզարնի, նաեւ՝ որպեսզի 70 հոգի իրար գլուխ չհավաքվեն ու...

Փոխարենն արդեն 3 ամիս է, ինչ բաժանմունքում նոր անդամակցությունների շարք է սկսվել: Այդ կառույցի հիմնական կորիզը՝ 60-70 հոգի, փոխարինվում են նորաթուխ երկրապահներով, որոնք, թերեւս, ավելի կառավարելի են գեներալի համար: «Հին կազմից երեւի մի 10 հոգի են մնացել, մյուսներին չենք ճանաչում: Մեր բաժանմունքը միակն էր, որի կորիզը «Սպանդարյան» ջոկատի պղաներն էին: Երեւանի 10-12 տարածքային կառույցներից 10-ը 7-8 տարի առաջ տեղի ունեցած ԵԿՄ պառակտումից հետո դուրս եկան միությունից եւ ձեւավորեցին «Ոգու փորձություն» կառույցը: Մանվելը հիմա ուզում է ազատվել մեզնից, որպեսզի ոչ մեկն իրենց դեմ չընդվզի: Հիմա էլ շանտաժի են դիմում, թե՝ ինչ-որ միջոցներ են յուրացվել: Ի՞նչ միջոցներ, ո՞վ է ստորագրել էդ ստացված միջոցների տակ: Ոչ մի կոպեկ էլ չեն տվել ու մեզ չեն ասել, թե ինչու են մեր նախագահին հեռացնում պաշտոնից: Կոպիտ ասել են՝ դու սուս մնա, ձեզ չի վերաբերում, եւ վերջ»,- պատմեց ԵԿՄ-ից հեռացողներից մեկը: Ի դեպ, ԵԿՄ Կենտրոնի բաժանմունքի նախկին նախագահ Արտաշես Գյումրյանն էլ, որին անցյալ տարվա կեսերին փոխարինել էին նրա պղայով՝ Էդիկ Գյումրյանով՝ որպեսզի կառույցում շատ դժգոհություն չլինի, դեռ փետրվարի 6-ին է Մանվել Գրիգորյանին դիմում գրել ԵԿՄ վարչությանն իր անդամությունը սառեցնելու մասին: Կառույցի կորիզը հանդիսացող երկրապահներն ասում էին, թե իրենց երկու նախագահներն էլ՝ եւ Արտաշեսը, եւ Էդիկը, շատ լավ ղեկավարներ են եղել, եւ նրանց հեռացումն իրենց համար այդպես էլ հասկանալի չի եղել: Ասում էին նաեւ, թե ոչ մի ժողովի էլ չեն գնալու՝ «մենք իրանց հետ ոչ մի բանի չէինք էլ մասնակցի, դրանց հետ նույն կազմակերպության մեջ մնալն անիմաստ է, ուղղակի արդարության համար ենք դիմել դատարան: Համենայնդեպս, մենք սրա՛ն չէինք արժանի, շատ վիրավորված ենք: Էսպես պառակտել կլինի՞ ԵԿՄ-ն, որ սրանք են անում, կամավորը ո՞նց կարող ա ստրուկ լինի: Հիմա սպասում ենք դատին, դա մեզ համար բարոյականության հարց է»:

ԵԿՄ վարչության նախագահ Մանվել Գրիգորյանի օգնական Վարդան Վարդանյանն ի պատասխան մեր հարցին, թե՝ ինչո՞ւ էր ամիսներ շարունակ խաբում կամ թաքցնում բաժանմունքում տեղի ունեցող խմորումների մասին, ասաց՝ «ես տեղյակ չեմ եղել»: Ինչ վերաբերում է հեռացողների՝ դատարան դիմելուն, Վարդանյանն այսպես արձագանքեց. «Իրենց հարցրեք, թե ինչու են դատարան դիմում, այն էլ՝ համագումարից հետո: Համագումարից հետո բոլոր կառույցներում էլ նոր ընտրություններ են տեղի ունենում, այդ կառույցում էլ է եղել, ընտրել են զոհված ազատամարտիկի՝ Աշոտ Նազարեթյանի որդուն, Ռոբերտ Նազարեթյանին: Այնտեղ նաեւ ֆինանսական չարաշահումներ են եղել: 60 հոգանոց անզորրծության մատնված կառույց է եղել, ամենափնթի կառույցներից մեկն էր ամբողջ Հայաստանում: Ինքը՝ Գյումրյանը, էն ժամանակ ընդունել է, որ վատ են աշխատել: Հիմա 260 հոգի անդամագրվել է այդ բաժանմունքին: Անդամագրվել են ոչ պատահական մարդիկ՝ նրանք, ովքեր ժամանակին նրա պատճառով այդ կառույցում չեն եղել, բոլորը արցախյան ազատամարտի մասնակիցներ են, կան որ ջոկատներով են անդամագրվել»: Ավելին՝ ուշ Վարդանյանն առաջարկեց մեզ տրամադրել ինչ-որ փաստաթղթեր, որոնք, իր ասելով, փաստելու են կառույցի ղեկավարի ֆինանսական չարաշահումների մասին: «Ոչ մի խնդիր չեմ տեսնում, թող տան էդ փաստաթղթերը, թող հրապարակեն, եթե ունեն»,- մեզ հետ զրույցում շատ հանդարտ տոնով ասաց Էդիկ Գյումրյանը:

ՆԱԻՐԱ ՄԱՄԻԿՈՆՅԱՆ

# «Ժառանգությունն» արձագանքեց դեսպան Հեֆերնի հայտարարությանը

Նախօրեին «Հրազդան» հյուրանոցում երեւանյան տարբեր բուհերի ուսանողների եւ դասախոսների առջեւ ունեցած իր ելույթում Հայաստանում ԱՄՆ դեսպան Ջոն Հեֆերնը, անդրադառնալով մայիսի 6-ին կայանալիք խորհրդարանական ընտրություններին, հայտարարել էր, թե հասկանում է, որ լուրջ թերահավատություն կա այդ ընտրությունների առնչությամբ, բայցեւ հավելել էր. «Հիմա պետք չէ, որ մենք այսօր փորձենք պարզել, թե նրանց կասկածները ինչքանով են հիմնավորված, սակայն ես ուզում եմ հարցնել, թե այսպիսի կասկածներ ունեցող մարդիկ ինչպե՞ս են արձագանքելու: Արդյոք նրանք ամեն ինչ թողնելու են իշխանությունների տնօրինմա՞նը, թե՞ ավելի վատ՝ նրանք ուղղակի բաց են թողնելու փոփոխության հնարավորությունը: Օրինակ՝ ոմանք արդեն կանխավ հայտարարել են, որ մայիսին կայանալիք ընտրությունները կեղծվելու են, եւ այժմվանից արդեն կոչ են անում դուրս գալ բողոքի ցույցերի քվեարկության հաջորդ օրը: Իսկ նրանք, ովքեր ցանկանում են կառուցել ժողովրդավարություն Հայաստանում, չեն կարող սահմանափակվել հայտարարություններով այն մասին, թե ինչ պետք է անեն «նրանք»: Դրա փոխարեն, այդ մարդիկ պետք է կատարեն աշխատանքի իրենց մասը, ստեղծեն ինստիտուցիոնալ ցանցեր եւ դաշինքներ՝ իրենց ձայները լսելի դարձնելու համար, մշակեն եւ գործարկեն կեղծիքները կանխելու ու կառավարության հաշվետվողականությունն ապահովելուն ուղղված մեխանիզմներ»:



«Չէի ուզենա մեկնաբանել պարոն Հեֆերնի դիտարկումները: Ասեմ միայն, որ ինչ վերաբերում է «Ժառանգությանը», ապա, անկախ այն բանից՝ ունենք՞լ ենք սեփական թեկնածու, թե ոչ, մենք ամենայն պատասխանատվությամբ ենք մոտեցել ընտրություններին եւ մեզ հասանելի բոլոր լծակներն ու ռեսուրսները գործի ենք դրել դրանց ազատ եւ արդար լինելն ապահովելու համար, թույլ չտալու ընտրակեղծիքներ եւ ապօրինի այլ գործողություններ: Սակայն Հայաստանում բոլորը գիտեն, թե ովքեր են լինում արդեն 17 տարի կրկնվող զանգվածային եւ համակարգային բնույթ կրող ընտրակեղծարարությունների պատվիրատուներն ու շահառուները. դրանք երբեւէ ընդդիմության դաշտում չեն եղել: Դա, սակայն, մեզ համար երբեւէ հիմք չի եղել հուսալքության եւ անգործության գիրկն ընկնելու համար: «Ժառանգությունը»՝ հիմա էլ արդեն «Ազատ Դեմոկրատների» եւ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ միասին, շարունակելու է իր հետեւողական աշխատանքը եւ համառ պայքարը: Մենք, իհարկե, եւս ողջունում ենք իշխանությունների հավաստիացումները՝ ազատ եւ արդար ընտրություններ անցկացնելու մասին: Սակայն մենք վստահ ենք, որ եթե անգամ իշխող կոալիցիան կրկին փորձի կեղծել ընտրությունները՝ այս անգամ դա նրան չի հաջողվելու. մենք պարզապես դա թույլ չենք տա»,- անդրադառնալով ԱՄՆ դեսպանի հայտարարությանը՝ Aravot.am-ի հետ զրույցում ասաց «Ժառանգություն» նախընտրական շտաբի մամուլի խոսնակ Հովսեփ Խուրշուդյանը:

Ն. Մ.

# «Գլոբալ գոլդը» Նյու Յորքի արբիտրաժային դատարանու «մաքուր դուրս եկավ»

## Կանադական «Կալդերա Ռեսուրսիզ» ընկերություն ապօրինաբար իրենով արած բաժնետոմսերը կվերադ

Հայաստանյան «Գլոբալ գոլդ մայնինգ» եւ կանադական «Կալդերա Ռեսուրսիզ» ընկերությունների դատական պայքարը տեղափոխվել է միջազգային ատյաններ: «Գլոբալ գոլդ մայնինգ» ընկերությունը, որը զբաղվում է ոսկու եւ պղնձի արդյունահանմամբ եւ հանքավայրերի շահագործմամբ, մոտ 1 տարի հայաստանյան դատարաններում պայքարում էր, որպեսզի անվավեր ճանաչվեր «Կալդերայի» կողմից «Մարջանի» հանքավայրի բաժնետոմսերի 100%-ով իր անունով գրանցումը: Ըստ «Գլոբալ գոլդի»՝ պետական ռեգիստրում այդ գործարքը կատարվել է ապօրինաբար եւ խախտումներով, քանի որ «Կալդերան» այդ գրանցման համար օգտագործել է այս 2 ընկերությունների միջեւ կնքված համատեղ ձեռնարկության պայմանագիրը, որը «Կալդերան» խախտել է՝ սահմանված վճարումները չկատարելով: Ուստի պայմանագիրը համարվել է անվավեր: Դատական երկար քաշքշուկներից հետո վճիռ կայացվեց հօգուտ «Գլոբալ գոլդի» եւ որոշվեց, որ «Մարջանի» 100% բաժնետոմսերը պետք է վերադարձվեն ընկերությանը:

«Առավոտը» իր մի քանի հրապարակումներում (05.08.2011, 25.01.2011) անդրադարձել է այս երկու ընկերությունների «հակամարտությանը» եւ լուսաբանել դատական նիստերը:

Մինչ հայաստանյան դատարաններում քննվում էր խնդիրը, «Կալդերա» ընկերությունը 2010 թվականին «Գլոբալ գոլդի» դեմ հայցով դիմել էր Նյու Յորքի միջազգային արբիտրաժային դատարան՝ պահանջելով համատեղ ձեռնարկության պայմանագիրը «Գլոբալ գոլդի» հետ ճանաչել վավեր ու ուժի մեջ:



Երկարատեւ ուսումնասիրություններից ու քննարկումներից հետո միջազգային դատարանն էլ «հիասթափեցրեց» կանադական ընկերությանը: Ներկայումս միջազգային դատարանի դատավորի մարտի 29-ին կայացրած վճիռը մեր ձեռքի տակ է, եւ ըստ այդմ՝ դատարանը որոշել է, որ «Մարջանի» հանքավայրը պետք է վերադարձվի «Գլոբալ գոլդին»՝ վճռի կայացման օրվանից հաշված 30 օրվա ընթացքում: Թե 30 օրից «Գլոբալ գոլդը» ետ կստանա՞ իր «բաղձալի» հանքավայրը՝ ցույց կտա ժամանակը: Նշենք, որ Նյու Յորքի դատարանը նաեւ որոշել է, որ եթե «Կալդերան» «Գլոբալ գոլդին» փաստացի որեւէ գումար է վճարել երբեւէ, ապա այն պետք է վերադարձվի՝ դարձյալ 30 օրվա ընթացքում: «Առավոտը» «Գլոբալ գոլդի» հայաստանյան ընկերության տնօրեն Աշոտ Պողոսյանից հետաքրքրվեց՝ արդյոք կանադական ընկերությունը որեւէ վճար կատարե՞լ է մինչ պայմանագրի անվավեր ճանաչելը:

Պարոն Պողոսյան
մամբ՝ «Կալդերան»
րել է $50 հազար
պատրաստ են վեր
Միջազգային ար
դատարանի որոշմ
եւս մեկ ուշագրավ
որի՝ դատարանը
ընկերությանը թու
հանքավայրից ստա
(հանք շահագործու
շահույթից լրացուց
ներ է կատարում),
մանով՝ «Կալդերա
ունի հանքավայրի
ցի ծախսված յուրա
միլիոնի դիմաց սա
ռոյալթի»: Եվ քան
գոլդի» հայաստան
թյունը պարբերաբ
էր, որ կանադական
նը պայմանավորվա
ները չի կատարում
յունքում ընկերությու
կանին պարտքեր
մենք պարոն Պողո
ցինք՝ «Կալդերայի»
վճարած գումարը
միլիոնի: Աշոտ Պող
քերով՝ կանադակա
թյան ընդամենը
հազարի վճար է կ
տի «Կալդերան»
երես» չի տեսնի:
թյամբ դատարանը
լել է, որ եթե կողմ

### Բուլղարիայի հետ կհամագործակցենք օրենսդրորեն

Աշխատանքի եւ սոցիալական պաշտպանության ոլորտում Հայաստանի եւ Բուլղարիայի Հանրապետության միջեւ ներկայումս օրենսդրորեն կարգավորված համագործակցություն չի իրականացվում: Հաշվի առնելով այդ բացը՝ ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությունը Բուլղարիայի Հանրապետության համապատասխան գերատեսչության հետ՝ բուլղարական կողմի նախաձեռնությամբ, մշակել է միջգերատեսչական եւ միջկառավարական 2 համաձայնագրերի նախագծեր, որոնցից առաջինը ստորագրվեց երեկ՝ ՀՀ կառավարությունում: Ինչպես հայտնում են աշ-

«ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ն, «Արմենտել» ՓԲԸ-ն եւ Visa ընկերությունը հայտարարում են Հայաստանում Visa Alliance նոր կոբրենդային քարտի թողարկման մասին: Նոր համագործակցության առաջարկի շրջանակներում «ՎՏԲ-Հայաստան Բանկի» հաճախորդները եւ Beeline-ի բաժանորդները կարող են ձեւակերպել կոբրենդային Visa Classic Alliance դեբետային քարտ կամ էլ կոբրենդային Visa Gold Alliance վարկային քարտ եւ մասնակիցը դառնալ Beeline Bonus ծրագրին:

Հայաստանում եւ նրա սահմաններից դուրս գնումների եւ առեւտրասպասարկման կենտրոններում ծառայությունների դիմաց, ինչպես նաեւ ինտերնետ ցանցում կատարելով վճարումներ «ՎՏԲ-Հայաստան Բանկի» Visa Classic Alliance եւ Visa Gold Alliance քարտերով՝ կոբրենդային ծրագրի

## Թողարկվեց կոբրենդ

մասին, որը հասցեագրված է «ՎՏԲ-
յաստան Բանկի» հաճախորդների եւ
յաստանում խոշորագույն բջջային օպե
տորներից մեկի՝ «Արմենտել»-ի բաժան
ների բազմաշատ լսարանի համար:
Alliance քարտի թողարկումը հերթակ
քայլ է՝ ուղղված Հայաստանի բանկա
շուկայում քարտային պրոդուկտն
առաջխաղացմանը: Նոր կոբրենդա
քարտի քարտապանները կկուտակեն
նուսներ՝ կատարելով անկանխիկ վճար
ներ ամենօրյա գնումների միջոցով,

# Ոստիկանապետը դիմում է «քաղաքականացվ լրատվամիջոցներին»

## Ոստիկանությունը նախապատրաստվում է ընտրությ

ՀՀ ոստիկանության պետ, գեներալ-լեյտենանտ Վլադիմիր Գասպարյանի գլխավորությամբ երեկ հրավիրվել էր աշխատանքային խորհրդակցություն՝ կապված ԱԺ առաջիկա ընտրությունների հետ:

ՀՀ ոստիկանապետ Վլադիմիր Գասպարյանն ասաց, որ ահազանգներ են ստացել մինչեւ օրս՝ ցուցակների անճշտությունների եւ այլ երեւույթների հետ կապված:

Նա դիմեց լրագրողներին՝ առաջարկելով ավելի լայն համագործակցության դաշտ ստեղծել:

«Որպես տանտեր, որպես ոստիկանապետ փաստեմ. անաչառ ենք լինելու, մեր մոտեցումները լինելու են վերկուսակցական, վերքաղաքական: Մեր ֆունկցիաների մեջ են մտնելու սկսած ընտրացուցակների ճշտումները, վերջացրած թեկնածուների, տեղամասերի, շտաբների անվտանգությունը, որը կստվերի արդար ընտրությունները»:

Նա անդրադարձավ բողոքներին, մասնավորապես, «ուռճացված» թվերին: Խոսքը նույն ազգանունով, նույն տարեթվին ծնված անձանց մասին է:

Ոստիկանապետը շթաքցրեց, որ կան այդպիսի ցուցակներ էլ: «Մենք խորացել ենք ամենատարբեր ոլորտների մեջ, մենք աշխատում ենք, որպեսզի բերենք ամենապատշաճ վիճակի, որպեսզի ավելորդ շահարկումների տեղիք չտանք»:

Վովա Գասպարյանը խնդրեց «քաղաքականացված լրատվամիջոցներին» այս ժամանակահատվածում քաղաքականությամբ քիչ զբաղվել, ասելով. «Մենք փորձելու ենք բացարձակ



ազնիվ լինել մեր փոխհարաբերությունների մեջ: Ակնկալում եմ, որ արդյունավետ աշխատանք տեղի կունենա, ձեր բարձրացրած հարցերի լուծումները կգտնվեն»:

Ոստիկանապետը շբացառեց յուրաքանչյուր շաբաթ լրատվամիջոցների հետ հանդիպելու հնարավորությունը:

Ոստիկանությունում ընտրությունների նախապատրաստման հետ կապված՝ մտադիր են հրավիրել ընդլայնված շտաբի նիստ, որին կմասնակցեն կուսակցությունների նախընտրական շտաբները, լրագրողները՝ կարճաժամկետ, երկարաժամկետ, դիտորդները:

Ոստիկանապետի հրամանով ընտրական

նպատակով օպ
պետ էր նշանա
պետի 1-ին տ
Պողոսյանը, ի
շտաբի պետի տ
նակվել ՀՀ
շտաբի պետ
զարյանը:

Վերջինս տե
շտաբում ներգրւ
կանության բար
խատակիցներ, ն
խատակիցներ:
Նրա. «Ստեղծվե
վության հավւ
թյան, վերակա
թյան նկատմա
իրականացնող, ս
շական եւ իրավ
ման խմբեր էլ,
իրենց առջեւ դրւ

Վարդան Եղիա
րեց շուրջօրյա
սահմանները՝
587500: Կլինի
ջազգային եւ Ա
հետ աշխատելո

Ընտրարշավին
գիծը», որի մա
կան կայքէջում Լ

Վարդան Եղիս
կացրեց, որ ստ

# Մարզպետն օրենքին տեղյակ չի՞



Ոսկեպար գյուղը:

վուշի մարզի Ոսկեպարի միջնակարգ դպրոց» պետական ոչ առեւտրային կազմակերպության գործադիր տնօրենի պաշտոնակատար է նշանակել նույն դպրոցի ուսուցիչ Հարություն Ալավերդյանին եւ նրա հետ կնքել աշխատանքային պայմանագիր: Ոսկեպարի միջնակարգ դպրոցի նախկին տնօրեն Նվեր Բեգլարյանն ասում է, որ մարզպետի որոշումն անօրինական է, քանի որ Հարություն Ալավերդյանը դպրոցի կառավարման խորհրդի նախագահն է, որ դա «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգը հաստատելու մասին» կառավարության որոշման խախտում է: Պարզաբանման համար դիմեցի Տավուշի մարզպետարանի կրթության վարչության պետ Աշոտ Փաշինյանին: Նա ասաց, որ Հարություն Ալավերդյանը դպրոցի կառավարման խորհրդի կազմից դուրս գալու համար դիմում է գրել: Սակայն փաստն այն է, որ դպրոցի կառավարման խորհուրդն այդ առթիվ նիստ չի գումարել, եւ Հարություն Ալավերդյանը դեռեւս դպրոցի կառավարման խորհրդի նախագահն է: 12 տարի որպես մարզպետ պաշտոնավարող մարզպետ Արմեն Ղուլարյանը

Սով



«Ըն
կան
«Մար
գյուղ
նությ
Միջ

# Բրիտանացի փորձագետը՝ խորհրդարանական «ծիտիկների» ու հայկական իրավիճակների մասին

Բրիտանական խորհրդի հրավերով Հայաստանում է բրիտանացի մեդիա փորձագետ Կիթ Հայեսը, որը աշխատել է «Ռոյթերսում», BBC-ում, CNBC-ում եւ այլուր, ունի 35 տարվա լրագրողական փորձ:

Այսօր հայաստանցի լրագրողները թեյի սեղանի շուրջ զրույց ունեցան փորձառու լրագրողի հետ: Պարոն Հայեսն էլ ծանոթացրեց գենդերային քաղաքականության ու ընտրություններում կանանց ներգրավվածության հարցերի լուսաբանման անգլիական փորձին:

Քննարկման ընթացքում նա բանաձեւեց լրագրության իր պատկերացրած ոսկե կանոնը. «Լրագրության ոսկե կանոնն այն է, որ չկա ոսկե կանոն: Լրագրողները լավ պատմություն պատմողներ են, ու ցանկացած իրավիճակում պիտի գործեն հենց այդ իրավիճակին համապատասխան»: Բրիտանացի փորձագետին հետաքրքրում էր, թե ՀՀ ԱԺ պատգամավորության կին թեկնածուներին լրագրողները ի՞նչ հարցեր են ուղղում: Նա ասում է, որ ամենակարեւորը առաջին հարցն է, որից էլ կախված է ողջ հարցազրույցը եւ դրա հետաքրքիր լինելը: Aravot.am-ը հետաքրքրվեց, օրինակ՝ ինքը ինչ «բանալի» հարցեր է ուղղել ժամանակին բրիտանացի կին թեկնածուներին, հատկապես լրագրողների հետ դժվար հաղորդակցվողներին, լրագրողական ի՞նչ հնարքների է դիմել: Կիթ Հայեսը նշեց, որ տեղեկատվություն ստանալու համար հարցազրույցի ընթացքում ինքը հանկարծակիի է բերել զրուցակցին. «Երբ հարցազրույց տվողը շփոթվում է, սկսում է զայրանալ, իսկ զայրացած մարդիկ ավելի շատ են խոսում ու ավելի անկեղծ լինում»:



Փորձագետը գտնում է, որ թեկնածուի հետ զրուցելիս երբեք չպետք է շեշտադրել նրա սեռը եւ զրուցակցին «բացելու» համար ամենասկզբում պետք է խոսել նրա նախընտրելի թեմաներից:

Մեր դիտարկմանը, թե մի քանի կին պատգամավորության թեկնածու ունենք նաեւ լրագրողական դաշտից, քանի որ Հայաստանն էլ փոքր երկիր է, եւ լրագրողները այդ լրագրողներին հրաշալի ճանաչում են, ուրեմն, իր կարծիքով, ինչպե՞ս նյութ պատրաստել, որ ոչ միայն օբյեկտիվ, այլեւ հետաքրքիր լինի, Կիթ Հայեսը պատասխանեց. «Երբեք չասեք, որ Հայաստանը փոքր երկիր է, եւ իրավիճակն այլ է այստեղ: Այն ունի նույն խնդիրները, ինչ Մեծ Բրիտանիան: Մեզ մոտ էլ են լրագրողները պատգամավոր դառնում: Եվ անգամ Մեծ Բրիտանիայում լրագրողները այդ լրագրողներին քաջ գիտեն: ԶԼՄ ներկայացուցիչները տվյալ պարագայում պետք է ուշադրություն չդարձնեն այն բանին, որ ԱԺ պատգամավորության թեկնածուն լրագրող է, հանդիպումների ժամանակ չպետք է ցույց տան իրենց նախապատվությունը կամ վախերը»: Նա նաեւ հավելեց. «Մեզ մոտ լրագրողները պատահում է՝ պանդոկներում հանդիպումներ են ունենում, երբեմն նրանց մոտենում են քաղաքական գործիչները ու հիշեցնում իրենց ասուլիսի մասին, խնդրում այս կամ այն հարցը հնչեցնել եւ այլն: Երբ լրագրո՞ղն է դառնում քաղաքական գործիչ, լրագրողները չպետք է խրախուսեն իրենց նախկին գործընկերներին նույն խաղը խաղալ»:

Հանդիպման ժամանակ Կիթ Հայեսը լրագրողներին խորհուրդ տվեց Մարգարեթ Թետչերներ փնտրել հայաստանցի կին գործիչների մեջ, ու մաղթեց, որ մեր խորհրդարանում կանանց այնպես չվերաբերվեն, ինչպես Մեծ Բրիտանիայի 73-րդ վարչապետ Թոնի Բլերի պաշտոնավարման տարիներին՝ իրենց երկրում. «Կային կին պատգամավորներ, որոնց Թոնի Բլերի «ծիտիկներ» էին անվանում»:

ԳՈՀԱՐ ՀԱԿՈԲՅԱՆ

# Ո՛չ մի երկրում թանգարանը տեղակայված չէ բնակելի շենքում

## Գեղանկարիչ Տարոն Մուրադյանը՝ ժամանակակից արվեստի թանգարանի ու ժամանակակից նկարիչների ճակատագրի մասին:

Վերջին շրջանում արվեստի գործիչները հաճախ են բարձրաձայնում մեր երկրում իրականացվող մշակութային քաղաքականության թերությունների եւ հատկապես կերպարվեստի հանդեպ ձեւավորված անտարբեր վերաբերմունքի մասին: Սա էլ հենց առիթ հանդիսացավ գեղանկարիչ Տարոն Մուրադյանի հետ «Առավոտի» հանդիպման: Նա առաջիններից է, ով 1991-ից՝ շուրջ 18 տարի համագործակցելով Փարիզի Gallery Mouvance-ի հետ, այսօր էլ «տեղափոխվել» է Ժնեւի Gallery Bel-Air Fine Art:



Մեր զրուցակցից նախ հետաքրքրվեցինք՝ ինչպե՞ս են իրեն «գտել» Փարիզի հայտնի ցուցասրահից: «90-ականների սկզբներին մի քանի աշխատանք վերցնելով՝ ուղեւորվեցի Փարիզ, բնականաբար, ցանկություն ունենալով պայմանագիր կնքել որեւէ ցուցասրահի հետ: Սկզբում հանդիպեցի նման մշակութային օջախների 2 հայազգի տերերի հետ, որոնք անգամ «չզննելով» աշխատանքներս, մեղմ ասած՝ ինձ դուրս հրավիրեցին:

Միայն Փարիզում գործում է շուրջ 1000 ցուցասրահ, որից 14-ի դուռը ծեծելուց եւ մերժվելուց հետո, վերջապես աշխատանքներս հավանության արժանացան Եվրոպայում ճանաչված Gallery Mouvance-ի կողմից: Ընդ որում՝ վերջինիս միջոցով էլ ինձ համագործակցության հրավիրեցին Ժնեւի ցուցասրահ, որտեղ, բացի ինձնից, ուշադրության է արժանացել նաեւ Վահրամ Դավթյանը»,- ասաց արվեստագետը: Նա հավելեց, որ Արեւմուտքում գործող ճանաչված ցուցասրահներում աշխարհահռչակ նկարիչներ Սեզարի, Դալիի, Բրակի, Բոտերոյի, Իվ Քլայնի, Արմանի եւ մյուս անվանիների ստեղծագործությունների կողքին ներկայացված են նաեւ ժամանակակից ոչ այնքան հայտնի նկարիչներ:

Քանի որ Տարոն Մուրադյանի աշխատանքներից տեղ են գտել Երեւանի «Արամե» ցուցասրահում, հետաքրքրվեցինք արվեստագետի նկարների արեւմտյան եւ տեղական գնային քաղաքականությամբ: «Եվ դրսում, եւ Հայաստանում նկարներս նույն գինն ունեն: Դրանց չափը «որոշվել» է արեւմտյան ցուցասրահներում: Չեմ կարող հավատալ հաճախ հնչող այն կարծիքին, որ նույն գործը դրսում վաճառվում է ավելի թանկ, քան Հայաստանում: Աշխատանքն աշխատանք է... Ուրիշ հարց է, որ Հայաստանում մարդիկ ընկած են կենցաղային պրոբլեմների հորձանուտը: Ինչ խոսք, բոլորիս պարզ է, որ մինչեւ մշակույթը, մեր ժողովուրդը շատ ուրիշ հոգսեր ունի, ինչի լուծումը շատ հաճախ ակնկալում է պետությունից: Սակայն դա չի նշանակում, թե մշակույթը պետք է ստվերում մնա,- ասաց գեղանկարիչը, շարունակելով, թե այս բոլոր խնդիրները հեշտ լուծվող են, օրինակ բերելով մոտակա ԱԺ ընտրությունները եւ դրան հաջորդող նախագահականը,- պետք է «վերադասի» ճիշտ ընտրություն կատարել: Ի վերջո, Հայաստանը պարզապես բնակավայր չէ մեզ համար՝ մեր հայրենիքն է»:

Տարոն Մուրադյանը զրույցի ընթացքում քանիցս նշելով հայերիս արվեստասեր լինելու հանգամանքը՝ փաստեց ժամանակակից արվեստի թանգարանի շենքի տխուր վիճակը. «Ոչ մի երկրում չեք տեսնի, որ ժամանակակից արվեստի թանգարանը տեղակայված լինի բնակելի շենքի առաջին հարկում: Գոնե պետության կողմից պետք է վերաբերմունք լինի, հետո էլ սիրում ենք անընդհատ արտասանել, թե մշակույթը մեր այցեքարտն է»: Գեղանկարիչը օրինակ բերեց Լոնդոնի Tate ժամանակակից արվեստի թանգարանը, որտեղ ընդամենը մեկ անգամ ներկայացված երիտասարդ նկարչի առջեւ կարող են բացվել աշխարհի լավագույն ցուցասրահների դռները:

Տարոն Մուրադյանը ցավով փաստեց իր այն բարձրարվեստ վրձնակիցների վիճակը, ովքեր այսօր երեւանյան վերնիսաժում դժվարությամբ գոյատեւում են. «Մինչդեռ



Փարիզի Մոնմարտրի վերնիսաժում ցուցադրվող ինքնուսներին չես համեմատի Երեւանի վերնիսաժում մեծ թիվ կազմող պրոֆեսիոնալների հետ՝ գոնե մեկ պատճառով. տարեկան Փարիզ շուրջ 100 մլն զբոսաշրջիկ է ելումուտ անում, ինչից պակաս չի մնում Մոնմարտրը... Մի խոսքով՝ յուրաքանչյուրս մեր հերթին, իսկ պետությունն էլ շատ խնդիրներ ունի լուծելու»:

ՍԱՄՎԵԼ ԴԱՆԻԵԼՅԱՆ

## Տղամարդիկ խոցելի են, երբ փող չունեն

Տղամարդկանց ընկճախտի պատճառ է հանդիսանում ֆինանսական ճգնաժամը, նման եզրակացության են եկել անգլիացի հետազոտողները: Մասնագետների հաղորդմամբ՝ կանայք ավելի թեթեւ են վերաբերվում փողի կորստին ու ավելի հեշտ համակերպվում աղքատությանը:

Տղամարդիկ չնայած լուռ, բայց «ծանր» են դա տանում: Դրամապանակը դատարկ տղամարդը իրեն չափից դուրս անվստահ է զգում, կաշկանդված: Հետազոտողների՝ կանանց եւ տղամարդկանց շրջանում անցկացրած փորձարկմանը մասնակցել են 50 երիտասարդ կին եւ տղամարդ, նրանց հավասարաչափ գումար տալով՝ 3 շաբաթ հետո ստուգվել է արդյունքը: Կանայք իրենց տրված գումարը ծախսել էին 4-5 օրվա ընթացքում, տղամարդիկ՝ մինչեւ 10: Կանանց մեծամասնությունը փողը մսխել է խանութներում, տղամարդիկ՝ ժամանցի վայրերում: Գումարը վերջանալուց հետո, կանայք նեղսրտել են, որ չեն կարողացել շատ բաներ գնել, տղամարդիկ՝ դեպրեսիայի մեջ ընկել, որ գարեջրատներում, բարերում հաճելի ժամանակ անցկացնելու ընթացքում ձեռք բերած ծանոթությունները չեն կարողացել շարունակել փողի պակասի պատճառով:

## Երգչուհին հերքել է սիրավեպը

Երգչուհի Ռիհաննան հերքել է իր եւ Էշթոն Կատչերի սիրավեպի մասին տարածված լուրը: Այդ մասին նա հայտարարել է «Battleship» ֆիլմի մամուլի ասուլիսի ժամանակ, որտեղ նկարահանվել է նաեւ ինքը: Երբ լրագրողները նրան հարցրել են՝ երջանի՞կ է, արդյոք, անձնական կյանքում, հնարավո՞ր է՝ երգչուհու կողքին տեսնեն դերասան Էշթոն Կատչերին: Ռիհաննան հայտնել է, որ շատ երջանիկ է, բայց միայնակ է: Չնայած երգչուհու այս հայտարարությանը՝ wday.ru կայքը գրում է՝ պապարացիները տեսել են, թե ինչպես է օրերս Ռիհաննան լուսադեմին դուրս եկել Էշթոն Կատչերի տնից: Նշվում է, որ նրանց միջեւ իրոք սիրավեպ է եղել, մոտ երկու ամիս աստղային զույգը գաղտնի հանդիպել է: Բացի այդ, Ռիհաննան Էշթոնին հրավիրել է Լոնդոնում կայանալիք իր համերգներին ու ամեն ինչ արել իրենց գաղտնի հարաբերությունները լրջացնելու համար: Երգչուհին Նյու Յորքում Էշթոնին ծանոթացրել է իր եղբոր՝ Ռորիի հետ:

Սիրավեպի մասին լուրը հերքելու պատճառն էլ, ըստ լրատվամիջոցների, հավանաբար այն է, որ երգչուհին դեռեւս ստիպված է հանուն սիրո պայքարել Էշթոնի նախկին կնոջ՝ Դեմի Մուրի հետ:

Ե. Հ.

ԷՋԻ ԳՈՐԾԸՆԿԵՐՆ Է

# Կարեն Աղամալյան. «Տրամիզոնում եւս 1-2 վարկանիշ ենք ակնկալում»

Ապրիլի 12-ին Տրամիզոնում մեկնարկող բռնցքամարտի օլիմպիական միակ վարկանիշային մրցաշարին նախապատրաստվող Հայաստանի ազգային օլիմպիական հավաքականը վերջին ուսումնամարզական հավաքն է անցկացնում Աբովյան քաղաքում:

«Առավոտը» երեկ զրուցեց հավաքականի գլխավոր մարզիչ Կարեն Աղամալյանի հետ:

- Այս հավաքը վճռորոշն է: Ինչի՞ վրա եք հիմնական ուշադրություն դարձնում:

- Տեխնիկա-տակտիկական պատրաստվածության: Տղաները ֆիզիկական, ֆունկցիոնալ պատրաստվածության խնդիրներ չունեն: Նրանց մասնակցությամբ վերջին երկու մրցաշարերը ցույց տվեցին, որ նրանք հիմա մոտենում են լավագույն մարզավիճակին: Մարզիչներիս խնդիրը մնացած այս մի քանի օրերին, ինչպես ասում են, նրանց մաքրելն ու շտկելն է, մարտերին հոգեբանորեն պատրաստելը:

- Քանի՞ հոգի է Տրամիզոնում ռինգ մտնելու եւ ովքե՞ր են:

- Կորյուն Սողոմոնյան՝ 49 կգ, Հովհաննես Դանիելյան՝ 52, Արամ Ավագյան՝ 56, Վլադիմիր Սարուխանյան՝ 60, Արա Պուլուզյան՝ 64, Հրայր Մաթեւոսյան՝ 69 եւ Արթուր Խաչատրյան՝ 81: Ընդհանուր առմամբ՝ յոթ բռնցքամարտիկ:

- Եվ նրանք ի՞նչ տեղեր պետք է զբաղեցնեն, որպեսզի ուղեգրի արժանանան:



- Տարբեր քաշային կարգերում պահանջները տարբեր են: Ես կնշեմ միայն այն քաշային կարգերը, որոնց մենք մասնակցելու ենք: 49 կգ՝ առաջին քառյակ, 52, 56 եւ 81 կգ՝ լավագույն եռյակ, 69 կգ՝ մտնել եզրափակիչ, իսկ 64 կգ՝ միայն հաղթող դառնալ:

- Առայժմ միայն 75 կգ քաշային Անդրանիկ Հակոբյանն ուղեգիր ունի, որը նա նվաճել է Բաքվում կայացած աշխարհի առաջնությունում: Տրամիզոնից հետո նրան Լոնդոնում ընկերակցողներ կունենա՞նք:

- Պայքարը շատ դժվար ու ծանր է լինելու: Բայց ես ունեմ վիճակագրություն այն մասին, թե ովքե՞ր են մնացել ասպարեզում: Եթե ռեալ նայենք իրադրությանը, Թուրքիայում եւս 1-2 վարկանիշ հնարավոր է ձեռք բերել:

- Սովորաբար, անհաջողության մատնվելու դեպքում մեղքը բարդում են մրցավարության վրա...

- Որ դժվար է լինելու, իրոք, այդպես է: Այս էլ որերորդ անգամ կարեւորագույն մրցումներն անցկացվում են Թուրքիայում կամ Ադրբեջանում: Բայց մի բան ուզում եմ ասել անցած տարվա Բաքվի աշխարհի առաջնության մասին: Վերջին 15 տարում ես այդպիսի լավ մրցավարություն չէի տեսել: Ու երեւի օլիմպիական ուղեգրեր նվաճելու ամենալավ տարբերակը հենց այնտեղ էր, որտեղ պետք էր մտնել տասնյակի մեջ: Իսկ թե ինչո՞ւ չեղավ, թույլ տվեք չպատասխանել:

- Լոնդոնում մեդալ նվաճելն իրատեսակա՞ն եք համարում:

- Անդրանիկ Հակոբյանն արդեն այնքան կայացած բռնցքամարտիկ է, որ ի վիճակի է մեդալի համար պայքարել: Բայց ի՞նչ գույնի, գուշակել չեմ կարող: Նա ամենայն պատասխանատվությամբ մարզվում է, ինչի համար ես նրա օրինակը բերում եմ հավաքականի մյուս անդամներին: Նա այս ընթացքում միջին մակարդակի մրցման մասնակցեց Ֆինլանդիայում: Գոհ եմ: Ճիշտ է, դրանք նրան ոչինչ չէին տալիս, բայց կարեւոր էին ռինգն ու մրցակիցներին զգալը պահպանելու, մրցակցական պրակտիկան չկորցնելու առումով:

- Եթե էլի ուղեգրեր նվաճողներ էլ ունենանք, այդ պրակտիկան նրանց համար է՞լ եք կիրառելու:

- Այո: Եվ ոչ միայն նրանց համար: Մեր գլխավոր մրցումը օլիմպիադան է: Բայց ես, որպես ազգային հավաքականի գլխավոր մարզիչ, պարտավոր եմ նաեւ ապագայի մասին էլ մտածել: Մենք ունենք տղաներ, որոնք այսօր պատրաստ են պայքարել նաեւ Տրամիզոնի վարկանիշային մրցումում, բայց օլիմպիադայում բարձր տեղերի՝ դեռ ոչ: Դրա համար աչքիս առջեւ պահում եմ նրանց եւ հետեւից եկող մյուսներին՝ երիտասարդներին, որոնց նույնպես պետք է հավաքներում ընդգրկել եւ միջազգային մրցումներ գործուղել, որպեսզի «եփվեն»:

- Այդքան հնարավորություններ կա՞ն:

- Եթե նկատի ունեք ֆինանսական եւ նյութական միջոցները, այո: Պետբյուջեն մեր հավաքականներին բավարար չափով ֆինանսավորում է: Ամեն հարցով աջակցում են նաեւ ՀԱՕԿ-ն ու ֆեդերացիան: Այնպես որ, բողոքներ չկան:

Ա. ՀԱԿՈԲՅԱՆ

## ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

### Պոլիտեխնիկի ուսանողուհին՝ միջազգային կոնֆերանսի մրցանակակիր

Այս տարվա մարտին Մոսկվայի Բաումանի անվան պետական տեխնոլոգիական համալսարանում տեղի ունեցավ աշխարհահռչակ «Kaspersky Lab» հակավիրուսային ընկերության կազմակերպած տեղեկատվական անվտանգության հարցերով ուսանողական միջազգային կոնֆերանսը, որին մասնակցում էր ԱՊՀ երկրների բուհերի շուրջ 20 ներկայացուցիչ:

Հեղինակավոր այդ միջոցառման մասնակիցների թվում էր նաեւ Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի (Պոլիտեխնիկ) Կոմպյուտերային համակարգերի եւ ինֆորմատիկայի ֆակուլտետի ուսանողուհի Տաթեւիկ Բաղդասարյանը: Նրա զեկույցը (ՅոՍՏՎԻՌՉցՐՌՐցոՎՈ ռՑոՎՈՉՐՈՒՌփորՍՈ րՌրՑոՎՈ ՊՋցւրՑցտոՎփՈՑՏռ րՍՐօՑՏռ ՈցՑոՎՑՌՒՌՍՈՓՌտռ**p**) արժանացավ մասնագետների բարձր գնահատականին, իսկ Տաթեւիկը գրավեց երրորդ մրցանակային տեղը՝ արժանանալով պատվոգրի եւ $750 պարգեւավճարի:

Տաթեւիկ Բաղդասարյանի նվաճումը «Kaspersky Lab» ընկերության կազմակերպած միջոցառումներին արձանագրված բուհի միակ հաղթանակը չէ. դեռեւս 2009-ին նույն ընկերության մեկ այլ՝ «Տեղեկատվական տեխնոլոգիաների անվտանգությունը նոր սերնդի համար» խորագրով միջազգային երիտասարդական մրցույթ-համաժողովի ժամանակ ՀՊՃՀ վերոնշյալ ֆակուլտետի Տեղեկատվական անվտանգության եւ ծրագրային ապահովման ամբիոնի երկու ուսանողուհիների՝ Ելենա Կոսոլապովայի եւ Նինա Ազիզյանի՝ «Ծրագրային համակարգի մշակում՝ նախատեսված ինֆորմացիայի գաղտնագրման պահպանության մեթոդների հետազոտման եւ ուսումնասիրության համար» վերնագրով աշխատանքն ամենաբարձր գնահատականի էր արժանացել կազմկոմիտեի կողմից, եւ նախատեսված 3 առաջին կարգի դիպլոմներից մեկը շնորհվել էր Ճարտարագիտական համալսարանի ներ-

# «ՎիվաՍել-ՄՏՍ»-ը կրթական ոլորտում 4 ծրագիր կիրականացնի

Երեկ ՀՀ կրթության եւ գիտության նախարարությունում կայացավ «ՎիվաՍել-ՄՏՍ»-ի գլխավոր տնօրեն Ռալֆ Յիրիկյանի եւ ԿԳ նախարար Արմեն Աշոտյանի ասուլիսը, որի ընթացքում Ռալֆ Յիրիկյանը հայտարարեց ոլորտի բարեփոխումներին ուղղված չորս ծրագրերի իրականացմանը, ինչպես նաեւ «Լավագույն ուսանող» հանրապետական մրցույթի կայացմանն աջակցելու՝ «ՎիվաՍել-ՄՏՍ»-ի նախաձեռնության մասին: «ՎիվաՍել-ՄՏՍ»-ը կարեւոր է համարում սերունդների կրթությանն ուղղված ջանքերը: Հանրակրթությունից մինչեւ բարձրագույն կրթություն եւ գիտության զարգացում՝ գտնվում են Հայաստանի հեռահաղորդակցության առաջատար օպերատորի ուշադրության կենտրոնում: «Գոյություն ունեն սերունդներ կրթելու տարբեր մեթոդներ: Հավանաբար սխալված չեմ լինի, եթե ասեմ, որ այդ ուղիների արդյունավետությունը բարձրացնելու ամենակարճ ճանապարհը սովորողների շրջանում գիտելիքի հանդեպ հետաքրքրությունը բարձրացնելն է: Համացանցը տալիս է դրա հնարավորությունը, իսկ ժամանակակից աշխարհում ինֆորմացիոն առատությունը ստիպում է ձեռնարկել համապատասխան քայլեր: «ՎիվաՍել-ՄՏՍ»-ը պատրաստակամ է աջակցության հարցում: Մենք ցանկանում ենք տեսնել մի սերունդ, որը կարող է ընտրել կրթվելու եւ զարգանալու համար եղած հնարավորություններից լավագույնը»,- ընդգծեց «ՎիվաՍել-ՄՏՍ»-ի գլխավոր տնօրենը:




Հայաստանի 107 ավագ դպրոց ընդգրկված է համացանցում եւ 2007 թվականից օգտվում է կրթական՝ armedu.am պորտալից: Տեղեկատվական այդ միջավայրն այսօր Wi-Fi կապի կարիքն ունի, որը տրամադրելու է «ՎիվաՍել-ՄՏՍ»-ը: Դա թույլ կտա մեծացնել առցանց հաղորդակցման հնարավորությունը, բարձրացնել մանկավարժների աշխատանքի որակը, կրճատել dasaran.am էլեկտրոնային մատյանների լրացման ժամանակ հնարավոր խնդիրները եւ ամրապնդել ուսուցիչ-աշակերտ կապը:

«ՎիվաՍել-ՄՏՍ»-ը Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնին աջակցելու է նաեւ ուսումնամեթոդական պաշարների միասնական տարածք ստեղծելու հարցում: Այդ նպատակով նախատեսվում է ստեղծել «Էլեկտրոնային պաշարների շտեմարան» հայալեզու կայքը, որի շահառուները դառնալու են ուսուցիչներն ու աշակերտները:

Հաջորդ ծրագրի իրականացման անհրաժեշտությունը բխում է հանրակրթության մասին օրենքի պահանջներից: Այդ օրենքով երկու տարի առաջ սահմանվել է դպրոցների վարկանիշի որոշման պահանջ, որը նպատակ ունի գնահատելու հանրակրթական ուսումնական հաստատությունների գործունեության իրական արդյունքը: Ներկայումս դպրոցների վարկանիշը ձեւավորվում է հասարակական կարծիքի վրա, ինչը կարող է նաեւ սուբյեկտիվ լինել: Նոր համակարգի ներդրումը հնարավորություն կտա ներկայացնելու օբյեկտիվ իրողությունը: Բարձրագույն կրթությանն ուղղված բարեփոխումներից կարեւորվում է Բոլոնիայի գործընթացը՝ եվրոպական բարձրագույն կրթության համակարգին ինտեգրումը: Այստեղ կարեւոր է դառնում բուհերի վերաբերյալ առավել մանրամասն տեղեկությունների տրամադրումը: Դա հնարավորություն է տալիս համեմատելու տարբեր հաստատությունների որակը, առավելությունները եւ ուսանողին հուշում, թե ինչպես կատարել ճիշտ ընտրություն: «ՎիվաՍել-ՄՏՍ»-ը կրթական ծրագրերի կենտրոնին աջակցելու է բարձրագույն կրթության վերաբերյալ համապարփակ եւ թափանցիկ դասակարգման համակարգի ստեղծման հարցում: Իսկ բարձր առաջադիմություն արձանագրած ուսանողներին խրախուսելու նպատակով, աջակցելու է Հայաստանի երիտասարդական հիմնադրամին՝ «Լավագույն ուսանող» հանրապետական մրցույթի կազմակերպման համար: